Հրատ. ՀՐԱՆԴ Ց. ԱՊԱՃԵԱՆ Գրատան Թիւ 10

ԱՒԵՏԻՍ ԻՍԱՀԱԿԵԱՆ

# ԱՂԱ ՆԱԶԱՐ

( ՀԷՔԵԱԹ )

Տպարան «ՓԻՒՆԻԿ»
ՊԷՅՐՈՒԹ
1939

E-A LIT
ISAA
1939

Հրատ. ՀՐԱՆԴ Ց. ԱՊԱՃԵԱՆ Գրատան Թիւ 10

ԱԻԵՏԻՍ ԻՍԱՀԱԿԵԱՆ

# ԱՂԱ ՆԱՋԱՐ

( ՀԷՔԵԱԹ )

Տպարան «Փ ի ն ն ի կ»
ՎԻՅՐՈՒՔ
1939

# ԱՂԱ ՆԱԶԱՐ

Նազարը մի փոքրիկ գիւղի գղիր էր։

Շատ աղքատ ու անշնորհք մարդու մէկն էր, ծոյլ ու անճարակ. թուքը անսպառ վազում էր բերանից. դրա համար էլ գիւղում նրան «փալինքոտ Նազար» էին կոչում։

Հաստլիկ ու կարճ էր հասակով, հաստ գօտի էր կապում, որի մի կողմից միշտ քաշ էր ընկած կարմիր մեծ թաշկինակը, իսկ միւս կողմը միշտ խրած կար գրիչ-մելանը։ Որտեղի՛ց էր, ինչպէ՛ս էր եղել, այը ու բէնը իրարուց զատել էր սովորել նա, և այդ պատճառով էլ գիւղի մէկ «գիտնական մարդն» էր համարում իրեն։

Մի աչքաբաց կնիկ ունէր, որ օր ու գիշեր հարեւանների դրանը աշխատում էր, հաց էր թխում, կով կթում և դրանով տունը պահում։ Նազարն իր աշխատած չնչին բանը տալիս էր ծխախոտի և օղի. սրան համար օգուտ չունէր. դեռ լաւ էր, որ ցերեկն էլ փորը դուրս էր քըցում այս ու այն հարեւանի կամ ռէսի տանը։

Ո՛չ տղայ ունէին, ո՛չ աղջիկ. մենակ մի ձև էշ ունէին, չորս հաւ և մի աքլոր։ Գիւղի եզեր-

քին էլ մի երկաչքանի փլփլկած խրճիթ ունէին. մի աչքում մարդ ու կնիկ էին պառկում, մըւսում էլ էշը ու աքլորի ընտանիքը: Այնպէս փլփլկած էր խրճիթը, որ երբ հաւերը երդիքը քշուլ էին անում, հողը մաղւում էր անձրեւի պէս, իսկ վա՛յ թէ էշը իր փողը փչէր—ողջ խրճիթը կը դողդողար: Եւ երբ քամի էր լինում, մազ էր մնում, որ տունը բրդուճ անէր, տանէր:

—Ա՛յ մարդ,—գանգատւում էր կնիկը,—ո՛չ բարով հա էլ աշխարք մտայ, մարդ առայ, էսպէս էլ օ՞ր կը լինի, էսպէս էլ ապրո՞ւստ կը լինի, որ մենք ենք անում:

—Ի՞նչ անեմ, ա՛յ կնիկ.—ասում էր Նազարը,—ես էլ գիտեմ, որ գէշ է, ճարս ի՞նչ է. մարդս պիտի բախտ ունենայ, բախտ. խելք ու կարիճուբթիւն դարտակ բաներ են, թէ չէ, ի՞նչ է գո՛ւ ասա, ես հօ խնկատւ չեմ, պատճառն ի՞նչ է, որ ալքատ եմ:

—Խելատւ չես, բայց խելօքի պէս էլ չես. ախր, ա՛յ մարդ, բախտս ո՞րն է, հօ նստած տեղը պուտուկով ոսկի չպիտի՞ գտնես. գնա՛.—խրատւում էր խեղճ կնիկը, գնա՛, գլուխդ տուր քարին, քա՛րը տո՛ւր գլխիդ, տե՛ս, փող չե՞ս վաստակի, յետոյ խանութ բա՛ց, որ մենք էլ մարդու շարք մտնենք, օր տեսնենք:

—Կնի՛կ, գո՛ւ կնիկ ես, հէչ կը խօսիս. ասել եմ ու էլի կ՛ասեմ թէ՝ բախտն է բանը. բախտը որ տայ մարդուս, նստած տեղը թոնիրով լիքը

ոակի կուտայ։ Ի՞նչ է, ես ո՞ւմից պակաս տղամարդ եմ որ, ողջ գեղի գիտունը ես եմ, բայց արի տես որ, բախտ չունիմ. Ոչխան ի՞նչ է իմ քովս, Տէրտէրանց Պօղոս աղան ի՞նչ է իմ քովս, նրանց ես մի բրդուճ կ՚անեմ, կ՚ուտեմ,թէ խելքի, թէ կորիճուԹեան կողմից. բայց տես, որ նրանք բախտ ունին ու գոմշի տկով ոսկի։

—Հա՛, դու էիր պակաս՝ նրանց չհաւնելու, —ծաղրում էր կինը, հլա՛ մէկ քիթ ու բերանդ սրբի՛ր, նոր խօսիր։

—Պապանձւի՛ր, —գոռում էր Նազարը, — կնիկն ի՞նչ է որ, իր մարդու, իր գլխաւորի վրայ էսպէս ամբարտաւան բերան բանայ... ա՛խ,բախտ չունիմ,բախտ որ ունենայի. Թագաւորի աղջիկը կնիկս կը լինէր, չէ Թէ քեզ պէս անըզգամը։

Ու զայրացած դուրս էր Թռչում, դուռը բարկացած զարկում խեղճ կնկայ երեսին, նրա-տում էր սև էշը, մէկ ձեռքը երկայն մահակը բռնած, մէկէլով դաստակը ժանգոտ Թրի, որ իբրև գլիր կապել էր մէջքին և չո-չո՛ հրամայելով ու ասպանդակելով էշը՝ քշում էր գիւղամէջ, բերնին դրած չիբուխը, որից ծուխը բարձրանում էր Թոնրի պէս։

Գիւղի երախաները վազ էին տալիս նրա ետեւից ու ըղաւում։

—Բարով տեսա՛նք, փսլինքոտ Նազար, էդ հրեղէն ձիով աւազակները բռնելո՞ւ կ՚երթաս, բարի յաջողում։

Կատաղում էր Նազարը, երկայն մահակով հարուածում էր ամէն ընկած չարաճճիներին ու խրատում.

—Չէնե՛րդ, լակոտներ. ես ձեր հօր տեղն եմ, ձեր հօրերից մեծ մարդ եմ, ես Աղա Նազար եմ, սուսէք, թէ չէ էս թուրով ականջներդ կը կտրեմ։

—Մեղա՛յ, մեղա՛յ, Աղա՛ Նազար, Աղա՛ Նազար. բարով եկար, բարով եկար։

—Ապրի՛ք, ձագուկներս, էղպէս ասէք Աղա Նազար։

Եւ գոհ ու զուարթ գնում էր Նազարը, ռէսի դրան կանգնում. ռէսի հրամանները տանում էր այս տունից այն տունը ու մի տեղ մածում էր ուտում, մի տեղ մի օղի վայելում, մի ուրիշ տեղ մի հաւկիթ կուլ տալիս։

Օրը մթնում էր, և Աղա Նազարը կուշտ ու հարբած իր իշու հետ դառնում էր տուն։

❀❀❀

Մի՛ երեկոյ խեղճ կնիկը վառել էր օճախը, վրան դրել էր ջրով լի մի կաւէ աման, մէջն էլ մի քանի հատ կարմիր տակ։

Նազարը աղայի նման թիկն էր տւել խոտի վրայ, ամէն օրւայ պէս այսօր էլ գլուխը տաք էր, ասլանի կաթ կար փորին մէջ. հա՛, թիկն էր տուել, չիբուխը վառել ու մխտք էր անում։

—Ա՛յ կնիկ, միտ եմ անում աշխարքի

բանը, մեր գեղը ինձնից խելօք, բանգէտ ու կըտրիճ մէկը չկայ. էս օր ուէսին ու գիղի իշաններին, կ'ուզեմ ասել, իշխաններին էնպէս իմաստուն բաներ ասի, որ բերանները բաց ձնացին, հըմա, օգուտն ի՞նչ. մարդ պիտի բախտաւոր աստղի տակ ծնուած լինի։

Կինը լուռ էր. սիրտ չունէր խօսելու. այսօր խեղճը առաւօտից մինչև երեկոյ ոտքի վրայ էր եղել, հարեւանի բուրդն էր լւացել գետի մէջ ու սաստիկ յոգնել էր։

— Կնիկ, ասել է աստղը թէ՝ բախտն որ կայ ոսկի հաւկիթ ածող մի կոյր հաւ է, որ անարժաններէի գոգի մէջն է իր բնակալը դնում. ի՛նչ իմաստուն խօսք...

Աղա Նազարը, քէֆը տեղը, խօսում էր ու խօսում, առանց պատասխան առնելու։

Հաց կերան, պրծան, պատրաստուեցին քնելու, սովորոյթ էր, որ քնելուց առաջ միշտ իրար հետ ելնում էին, իշուն նայում, խոտ տալիս ու դառնում. ի՞նչ սովորոյթ. ճշմարիտն այն էր որ Նազարը վախենում էր գիշերը մինակ դուրս գալ՝ և դրա համար էլ ամէն անգամ ասում էր կնկանը թէ՝ կնիկ, դու ճրագը բռնէ, լոյս արա, ես տեսնեմ իշու առաջը բան կա՞յ թէ չէ։

Կինը ճրագը բռնել էր, Նազարը դուռը բացից. ամառւայ երկնքի երեսին շողին էին տալիս ոսկի աստղերը։

—Կնիկ, ա՛յ կնիկ, թէ որ բախտուննամ, մեծ մարդ կը դառնամ ու էս աստղերի համբանքի չափ ոսկի կ՛ունենամ։

—Դուն իշուն նայէ, քեզնից քեզ պէս հէչ մարդ դուրս գալն էլ շատ էր.էդ էլ մեծ բախտ էր...

—Ի՞նչ կ՛ասես, թէ որ բախտը ուզենայ, ինձնից մեծ մարդ չի՞ կարող դուրս գայ։

—Հա՛, հա՛, թէ որ բախտն էլ ուզենայ,էլի քեզնից մարդ դուրս չի գայ, ո՞ւր մնաց մեծ մարդ։

—Հաստա՞տ, վիրաւորուած հարցրեց Աղա Նազարը։

—Հաստա՛տ ու հաստա՛տ, փսլինքոտ։

—Ջէնդ կտրէ՛, գոռաց Նազարը։

—Կորի, գնա՛, հերիք մեծ-մեծ խօսիս,հոգիս հանեցիր, հարբած փսլինքոտ, ասաւ կինը, իսկոյն տուն մտաւ ու դուռը ամուր փակեց

Խեղճ Նազարը մնաց դուրսը, վախից դողդողում էր։

—Էս էլ իմ քօռ բախտից. ո՛ր տեղ է տեսնուած, որ կնիկը մարդուն դուրս անէ։

—Քեզ պէս մարդը չունենամ էլ, կը լինի, —ձայնեց ներսից կինը— ահա՛, ա՛ռ թուրդ,ա՛ռ մահակդ ու հայդէ՛, է՛լ աչքիս չերեւաս. և պատի ծակից դուրս ձգեց Աղա Նազարի «զէնքերը»։

—կնի՛կ ջան, ես ո՞ւր գնամ էս կէս գիշերին, —աղաչեց Նազարը։

—Գրողի ծոցը, ո՞ւր կ՛ուզես գնա, հոգիս ազատուի քեզնից։

Նազարը աղաչեց, պաղատեց, հնար չեղաւ։

—Ա՜յ քեզ քեզ բախտ. ճիշտ որ խելք ու կտրիճութիւն դարտակ բաներ են եղած, տխուր-տխուր ինքնիրեն խօսեց Նազարը ու իշու կողքին, չոր աղբի վրայ պառկեց ու չիմացաւ թէ ինչպէս քնեց։

***

Արեւը դեռ չէր ծագել, երբ Նազարը խայթւածի պէս զարթնեց. իշաճանճերը թափւել լցւել էին նրա քիթ ու բերնի վրայ, ուտում ու կծում էին խեղճ Նազարին։

Նազարը զայրացած, քնաթաթախ՝ տարաւ-բերաւ, ափով ամուր մէկ հատ զարկաւ իրեն քիթ ու բերնին։ Ու մէկ էլ ի՜նչ տեսաւ.—ճանճե՜ր, ճանճեր, ամենքը սատկած, ջարդ ու փշուր եղած ճանճեր իրար վրայ թափւեցին գետին։

—Տօ՛, ես աղամարդ եմ եղել, մէկ զարկով հազարը սպանեցի…

Ու մէկէն ոտքի ելաւ, կարմիր մեծ թաշկինակը փռեց, մատները թաթխեց մելանի մէջ ու մեծ տառերով վրան գրեց.

Աղա Նազար, Աղա Նազար,
Որ մէկ զարկով ջարդէ հազար։

Երօշակի պէս թաշկինակը կապեց մահակի ծայրից, թուրը կախեց մէջքին, նստաւ իշուն, չիբուխը դրեց բերանը ու ծուխը ամպի նման բաց թողնելով ասաւ.

—Հողը էն տղամարդու գլխին, որ կնկայ անուն կուտայ։

Ոն Նազար, դո՛ւ Աղա՛ Նազար, էշը քշեց, ընկաւ մեծ ճամբան, ու գնաց դրօշակը ձեռքին, Թուրը մէջքին, չիբուխը բերնին, գլուխը՝ բարձր, փափախը՝ ծոծրակին, հպարտ ու աղավայել…

Անցորդները, թէ՛ ոտաւոր թէ՛ ձիաւոր, տեսնում էին Աղա Նազարին, էշն ու Թուրը, կարդում էին դրօշակը և վախից դողում էին։

—Ամա՛ն, Աղա Նազա՛ր, ոտքդ պագենք, խղճա՛ մեզի, խեղճ մարդիկ ենք, աղաչում էին ճամբորդները։

—Գնացէ՛ք ձեր ճամբան, —հրամայում էր Աղա Նազարը. և ամենքից մի քիչ հարկ էր վերցնում, որից հաց ու ծխախոտ, որից օղի և չամիչ, որից արմաւ, նուշ և ուրիշ մանր-մունր բաներ։

—Սրանց դիմաց խելք ու կտրիճութիւն բանեցնելը ի՞նչ հարկաւոր է, ա՛յ Աղա Նազար, խօսում էր Նազարը ինքն իրեն հետ. բախտն է բերում սրանց իմ դուռը, թէ որ բախտն ուզենայ, ոսկու քարվաններ կը բերէ, առջևս կը թափէ։

❀❀❀

Ու գնաց Աղա Նազարը. շատ գնաց թէ քիչ՝ ճամբան գիտէ. մէկ էլ տեսաւ, որ սարի փէշերով փոշի էր բարձրանում ու փոշու միջից գը՛նդ հա գը՛նդ, գը՛նդ հա գը՛նդ որօրւելով, շորորւե-

լով մի քարվան է գալիս. էն էլ ի՛նչ քարվան, գլուխը սարի տակն է, պոչը սարն գագաթի մա֊պերի միջից նոր է ծայր տալիս։

—Թէ որ բախտ ունենամ, էս քարվանը իմ կը լինի, ասաւ Աղա Նազարը։

Մօտեցաւ քարվանը. Աղա Նազարը քարվա֊նապետի կեռ թուրն ու երկայն նիզակը տեսաւ թէ չէ՝ վախից ճանապարհի կողքին մի ժայռի տակ կուչ եղաւ։

Քարվանը եկաւ, հասաւ ժայռի դիմացը. ճէկ էլ յանկարծ քարվանապետի աչքին դիպան իշու սուրսուլիկ ականջները ու դրօշակի ծայրը, և գոռաց.

—Ո՛վ ես ո՞վ կայ էդտեղ, մա՞րդ թէ սատանայ.

Լսեց Աղա Նազարը. մազ ճնաց լեղին պատռէր. «Էս տեղ խելքի ու կտրիճութեան տեղ չէ, բախտ է հարկաւոր», ասաւ ու դուրս թռաւ քարի տակից, ցցեց քարվանի առաջը.

—Ես եմ, ես՝

Աղա Նազար, Աղա Նազար,

Որ մէկ զարկով չարդէ հազար։

Քարվանի գլխաւորը տեսաւ դրօշակը, կար֊գաց, լսեց աղա Նազարի ահռելի խօսքերը, զար֊մացաւ-վախեցաւ, գլուխը կորցրեց ու մէկ է՛լ ուղտի վրայից իրեն վայր ձգեց Աղա Նազարի ոտքերի տակը։

—Աղա՛ Նազար, Աղա՛ Նազար, փէշդ եմ ըն֊

կել, քարվանս քեզ լինի, իմ ու ընկերներիս կեանքը բաշխէ՛։

—Բաշխեցի՛, —խրոխտ ձայնով ասաւ Աղա Նազարը, զուր արուեստ անել չէ իմ ուզածը։

Քարվանապետի ընկերները եկան, խոնարհ գլուխ տուին Աղա Նազարին ու քարվանը բեռնելով յանձնեցին իրեն։

Աղա Նազար, հիմայ հաստատ, որ Աղա՛ Նազար, էլը նստած անցաւ քարվանի գլուխն ու մէն-մինակ եռեւից քաշեց քարվանը, կուշտ-կուր ծխելով չիբուխը ու հետն էլ բարձր-բարձրը խօսելով.

Ես ասում էի չէ՞, թէ խելք ու կարիճուն թիւն զարտակ բաներ են, մարդուս բախտ է հարկաւոր, բախտ. հիմի քարվանս տանիմ քաղաք, ծախեմ, ինձի համար մէկ քէօշք ու սարայ շինեմ, ընկնիմ կողքիս, առքով-վաճառքով ապրիմ։

***

Գնա՛ց, գնա՛ց Աղա Նազարը ու մտաւ մի ուրիշ թագաւորի հողը։ Դու մի ասիր՝ այդ տեղերը աւազականոց է. Աղա Նազարն էլ միամիտ միամիտի պէս։

Աւազակները ճանապարհի եզերքներին որսկան շների պէս զարան մտած, աչք էին պահում անցորդի. հէնց որ տեսան Աղա Նազարին, մեն-մենակ, դրօշակը, անծայր քարվանը ծանր բեռների տակ, առանց մարդ ու պահապանի, վրաները սառը ջուր մաղեց։

Երկար ու բարակ խորհուրդ արին, վերջը աւազակապետը ասաւ թէ՝ դեւի ուժ կ'ունենայ էդ մարդը, որ մէն-մենակ առել է հարուստ քարավանը, ընկել է սար ու ձոր. ւլտրել անցել է հազար ճամբայ, հազար չար ու բարի է յաղթել. չէ՛, լաւն էն է, որ երթանք, մեր թրերը դնենք Աղա Նազարի ոտքերի տակ, խնդրենք որ դառնայ մեր պետը, նրա անունով աշխարհ կը տիրենք։

Ամենքը մէկ խօսք եղան, ու քառասուն հոգին մէկ մարդու պէս եկան, գլուխ տուին ու թրերը դրին Աղա Նազարի իշու ոտքերի առջև։

Աղա Նազարը դեռ գլխի չէը ընկել, երբ աւազակապետը ասաւ.

—Աղա՛ Նազար, Աղա՛ Նազար, մենք ամենքս էսուհետ քու ծառան ենք. էս կտրիճների պետն եմ ես. հիմի կը տեսնեմ, որ դու ես մեկակ արժանաւորը՝ մեր գլուխ-գլխաւորը լինելու։

—Ապրի՛ք, տղերք, ասաւ Աղա Նազարը հըպարտ-հպարտ ու թուքը սրբելով,—ես, որ մենակ մէկ զարկով հազարը կը ջարդեմ, ձեզ հետ մէկտեղ՝ հարուր հազարը չեղածի պէս, մեր դէմ էլ աշխարհ չի կարող կանգնի։

Ու Աղա Նազարին վերցրին, տարան իրենց բերդը, որ արծւի պէս թառել էր հեռու սարի գլխին, աչքերը ամէն կողմ սրած։

Նահեցրին նրան փառքով օճախի գլուխը, համեցրին խաո չիրուխը ու բարև բռնած կանգնեցին ոտքի։

«Էս մնգամին էլ խելքս ու կարիճութիւնս ինձի բանի պէտք չեկաւ. մարդս պէտք է բա՛խտ ունենայ, որ բախտաւոր լինի, թէ չէ ուժով-զօրով, խելքով բան դուրս չի գայ». մտածում էր Աղա Նազարը։

Աւազակները ասին.

—Աղա՛ Նազար, դու քու աղայութեանդ վայել հանդիսաւ նստիր, քու անունը մեզ վրայ լինի, հերիք է։

*☆*

Ու քարաւանն աւազակները Աղա Նազարի անունով զարկում էին քօչ ու քարվան, արշաւում էին գեղ ու քաղաքներ, կարում, թալում, չարչում, աւար անում ու հարկ դնում վրանները։

Ժողովուրդները ահ ու սարսափի մէջ էին. Աղա Նազարի անունը հերիք էր մինակ գեղ ու քաղաք լեղապատառ անելու։

Ու հաւաքւեցին գիւղ ու քաղաք։ Գնացին թագաւորի մօտ գանգատ թէ՝ չգիտենք ո՞վ է մեր թագաւորը, ո՞ւմ պիտի հարկ տանք, երկու թագաւորի հարկ չենք կարող տալ, մեռա՛նք, մեռանք. կամ դու եղի՛ր հաստատ թագաւոր, կամ երթանք Աղա Նազարի դուռը։

Թագաւորն էլ զօրք հաւաքեց ու եկաւ մի գիշեր բանակ դրեց Աղա Նազարի բերդի դիմացը։ Առաւօտ աւազակները տեսան զօրքը եւ եկան

ասին Աղա Նազարին։

— Աղա Նազար, Աղա նազար,
Որ մէկ զարկով չարդես հազար.

Դուն էս մեծ օրւայ համար էիր մնում, որ փառքդ չատնայ, անունդ ծովերը անցնի. թագաւորն եկել, անթիւ անհամար վրան է զարկել, կռիւ կ'ուզէ։

Վախից Աղա Նազարի սիրտը սկսաւ դողալ ու չիրուխի ծուխը բերնից զօռով քշելով՝ ասաւ.

—Շա՛տ լաւ, պատրաստւինք, երթանք։

Ու իրին մտքում խօսում էր նորից Աղա Նազարը. «Ես գիտեմ որ էստեղ էլ խելք ու կըտրիճութիւն դարտակ բաներ են, քանի՞ գլուխ ուներս թագաւորի զօրքի դէմ եկնելու, բայց բախտն է բանը. թէ որ բախտ ունենամ, թագաւորին կը յաղթեմ, տեղը կը նստիմ»։

ՀՀՀ

Թագաւորի զօրքը իրար անցաւ թէ՝ ի՞նչպէս գուրս գանը Աղա Նազարի դէմ, որ մէկ զարկով հազար կը չարդէ. մեզ համաք մէկ է, ո՛վ ուզում է լինի թագաւոր. գուրս գան, կռւին իրար հետ, ո՛վ որ յաղթեց, թող նա լինի թագաւոր։

Եւ զօրքը բոլորով մէկ յայտնեցին թագաւորին թէ՝ թող ինքը մենակ երթայ Աղա Նազարի դէմ, Աղա Նազարն էլ մենակ գայ թագաւորի դէմ. թագը քօչին կը վայելէ, գուր արիւն թափելու ի՞նչ հարկ կայ։

Եւ ղրկեցին պատգամաւորներ այս մտքով Աղա Նազարի մօտ։

—Շա՛տ լաւ, թող էդպէս լինի, հաշիւը մէկ —է, պատասխանեց կուրիճ Աղա Նազարը։

Թագաւորն էր. հրեղէն ձին նստած, թուրը քաշած, եկաւ կանգնեց դաշտի մէջին, Աղա Նազարն էլ աև էշը նստած, մէկ ձեռքին դրօշակը, միւսին ժանգոտ թուրը՝ եկաւ կանգնեց Թագաւորի դէմ։

Թագաւորը տեսաւ Աղա Նազարի կերպարանքը, էշն ու թուրը, մտածեց «Հը՛մ, հասկացանք, Աղա Նազարի կուրիճութիւնը իր խելքի մէջն է. էստեղ ուժի տեղ չէ, պէտք է նայեմ, ինչ որ նա է անում, էն էլ ես կ՛անեմ»։

—Դո՞ւ ես Աղա Նազարը, —հարցում արաւ Թագաւորը։

Աղա Նազարի նման չե՛մ, ինչ՞ է, չես տեսնում, կարդա՛ դրօշակս.—ասաւ Աղա Նազարը, ծնկները դողացին, ու վախից գլուխը թեքեց, պահեց իշու պարանոցի տակ.—«Հիմի կը զարկէ, հիմի կը զարկէ — մտածում էր Աղա Նազարը, խելք ու կուրիճութիւն էստեղ ի՞նչացու է. մինակ բանը մնացել է բախտին»։

Այնինչ Թագաւորն էլ Աղա Նազարի պէս գլուխը պահել էր ձիու պարանոցի տակ ու սպասում էր։ Աղա Նազարը տեսաւ, որ զարկը ուշացաւ, ուզեց իմանալ թէ ի՞նչ կայ. տեսաւ, որ Թագաւորը իրեն պէս վախեցել է... ու իեկ է,

աչք չթարթած՝ թռաւ գետին ու տո՛ւր թէ կու-
տաս՝ ժանգոտ թրով մի հատ թագաւորի գլխին,
թագաւորը ժամանակ չունեցաւ գլուխը վեր
բարձրացնելու, Աղա Նազարը զարկում էր հա՛
զարկում, թագաւորը թուլացած ընկաւ գետին,
պատռած գլխից արիւնը բղխում էր աղբիւրի
պէս...

Աղա Նազարը վերցրեց թագաւորի թուրը,
կտրեց գլուխը ու թագը վրան՝ բռնեց բարձր,
զօրքին ու աւազակներին ցոյց տուաւ։

— Ապրա՛ծ կենայ մեր նոր թագաւորը, Աղա
Նազարը, — որոտաց զօրքը, և թմբուկներն ու
փողերը թընդացրին լեռ ու ձոր։

—Ապրած կենայ մեր մեծը,մեր թագաւորը,
Աղա Նազարը, —ուրախ ուրախ գոչեցին աւա-
զակները։

Եւ զօրքն ու աւազակները վազեցին դէպի
Աղա Նազարը։

Զինուորները զէնքերը դրին Աղա Նազարի
ոտքերի տակ, գլուխները խոնարհեցին գետին,
հպատակութեան երդում տուին։ Յետոյ թագա-
ւորի թագը դրին Աղա Նազարի գլուխը, ծիրանին
ձգեցին ուսերի վրայ, հեծցրին թագաւորի նժոյգը,
ու երգով, պարով, թմբուկներով, նազար փառ-
քով տարան քաղաք։

«Ես ասի ու կ'ասեմ, որ բախտն է բանը», մտա-
ծում էր Աղա Նազարը թագը գլխին ու թա-
գաւորի վայել բարեւ էր առնում, բարեւ տալիս։

Ժողովուրդը, մայր ու մանուկ, տղայ ու աղջիկ, ծեր ու երիտասարդ, հարուստ ու աղքատ, առաջ էին եկել Աղա Նազարին. մեծամեծները ոսկէ մատուցարանի վրայ քաղաքի բանալիները աղ ու հացի հետ մէկտեղ ներկայացրին Աղա Նազարին։

Ու ամէնքը մէկտեղ ծունկ իջան և զօրքի պէս հպատակութեան երդում տուին։

Գուսաննները առաջ եկան և երգեցին.

Աղա՛ Նազար, մեծ թագաւոր,
Բարձդ, գահդ չնորհաւո՛ր.
Հազար տարի ապրած կենաս,
Ու յետոյ էլ մահ չունենաս։
Ծելքով, չնորհքով, փառաց փառքով
Անցնիս, դառնաս մեր երկնքով.
Դո՛ւ, մեր արև, պայծառ շողա՛,
Մեր թշնամին տեսնի դողայ։
Շուաքիդ տակ ապրինք անվախ,
Թուրդ կտրէ թէ՛ աջ, թէ՛ ձախ.
Թո՛ղ արեւը մայր չը մտնի
Հողիդ վրայ. միշ՛տ լոյս լինի։
Աղա՛ Նազար, մեծ թագաւո՛ր.
Թուրդ, թագդ չնորհաւո՛ր,
Ապրիս հազար, Աղա՛ Նազար,
Որ մէկ զարկով ջարդես հազար։

Մեծ հանդէսներով, յաղթական ու ծաղկեպսակ կամարների տակով տարան Աղա Նազա-

րին Քէօշք ու Սարայը։

Լողացրին վարդաջրով, անուշաբոյր իւղերով օծեցին ոտքից-գլուխը, փղոսկրէ սանտրով մազերը սանտրեցին. հագցրին գոհարազարդ արքայական զգեստներ և խնդրեցին գահ բարձրանալ։

Դրօշակը տարան Քէօշք ու Սարայի դարբասի ճակատին բարձր կանգնեցրին, որ յաղթական ծածանի՝ հպատակների վրայ՝ որպէս հովանի, թշնամիների վրայ՝ որպէս սարսափ։

Թուրը կախեցին գահի վերև նախկին թագաւորների սխրագործ թուրերի մէջ տեղը։

Ազնիւ էշն էլ, որ Աղա Նազարի ամէն քաջութիւնների մէջ իր համեստ բաժինն ունէր, փաթաթեցին ոսկեթել ծածկոցներով, տարան արքայական ախուռը, տեղ տուին նժոյգների վերեւը ու մսուրքի մէջ անպարպելի գարի՝ ընտիր, հատհատ մաքրած։

Աղա Նազար բազմեց ոսկի գահի վրայ. յաղթեալ թագաւորի նազելի և չքնաղ թագուհին եկաւ, խոնարհ գլուխ վեր բերաւ նոր թագաւորին ու ասաւ.

—Շնորհաւոր լինի թագդ, Աղա՛ Նազար, դո՛ւ իմ թագաւոր, դո՛ւ իմ անյաղթ ամուսին։

Եւ Աղա Նազարը թագաւոր-ամուսնու պէս գրկեց թագուհու նազուկ մէջքից ու տեղ հրամայեց իր ալ կողքին։

Տէրութեան ամբողջ ժողովուրդը ընկաւ մեծ

խրախճանքի մէջ, այսպէսի խելօք ու հզօր թագաւոր ունենալու համար։

Աղա Նազարն էլ իր աւազակներին կարգեց մէկին վէզիր, միւսին նազիր, մէկին դահճապետ միւսին գանձապետ, մէկէլներին զօրապետներ ու նահանգապետներ։

Աղա Նազարը նստել, հանգիստ թագաւորում է, վէզիրը ու նազիրը կառավարում են երկիրը և օրէնքներ հնարում. դահճապետը գլխատում է օրինազանցներին, իսկ գանձապետը Աղա Նազարի պատկերով փող է կտրում։

Զօրապետները նոր հողեր են կցում Աղա Նազարի հին հողերին, նահանգապետներն գանձերի վրայ գանձեր դիզում։

Աշխարքով մէկ տարածուել է Աղա Նազարի մեծ անունը, ամեն բերան նրա գովքն է երգում։

Աղա Նազարի հին կնիկն էլ լսեց նրա համբաւը, եկաւ կարօտով գրկեց թագաւոր ամուսնուն, գովեց նրա խելքն ու շնորքը և թագաւորական հրամանով նստեց նրա ձախ կողքին։

***

Եւ տարի բոլոր հազար ու մէկ ջահերով վառւած էին Աղա Նազարի Բէօշք ու Սարայները, տարի բոլոր խնջոյք կար մարմարէ կամարների տակ։

Դուրսը թնդում էին զօրքի կեցցէները, և թմբուկները որոտում թագաւորի փառքի համար։

Բազմել էր Աղա Նազարը գահի վրայ, թագը գլխին, ծիրանի՛ն ուսերին, չքնաղ թագուհին աջ կողքին և իրեն կնիկը ձախ կողքին։

Ոտքերի տակ չարուել էին Յէրուսթեան մեծամեծները և նրանց սիրուն կնիկները։ Իմաստուններն ու գուսանները զարմանում էին ու փառաբանում Աղա Նազարի խելքն ու կորիճութիւնը։

Մետաքսէ բարակ քօղերի՛ մէջ մշուշուած սիրուն աղջիկները և ոսկեգանգուր մանկլաւիկները պարում էին ու երգում։

Հազարան վարդերի անուշ հոտով ու հազարեան բլբուլների անուշ երգերով հարբած էին ամէնքը։

Այս Նազարը ծխում էր մարգարտէ չիբուխը ու խմում հարիւր տարեայ գինին։

Ծմռում էր գինին ու թուքը սրբելով չոյում էր նազելի թագուհու այտերը որ մեղմիկ ասում ականջին.

— Տեսա՞ր, թագուհիս, ես ի՞նչ խելօք ու կորիճ մարդ եմ, զգիր տեղից ելայ, յաղթեցի թագաւորին, սիրուն կնիկը առայ, դառայ թագաւոր. աշխարքիս երեսին, ասել եմ, էլի կասեմ, բախտ-մախտ դատարկ բաներ են, խելք ու կորիճութիւն է մէնակ պէտք։

Ու թագուհին մանրիկ ժպտում էր ու թուշը դէմ անում Աղա Նազարին. քալ ու կորիճ Աղա Նազարն էլ անուշ պաչ էր անում ու խմում

հարիւր տարեայ գինին։

Ամուսի էր ու դառնում իր կնկանը, բոթում էր նրա կողքը ու փսփսում ականջին։

Տեսա՞ր, կնիկ, ես չէ՞ի ասում թէ խելք ու կտրիճութիւնը դարտակ բաներ են աշխարքիս երեսին. մարդս բախտ պէտք է ունենայ, մէնակ բախտ... Ծիծաղում էր կնիկը ու կարմիր թուշը դէմ անում Աղա Նազարին, բախտաւոր Աղա Նազարն էլ գզիրի իրեն հին սովորութեան պէս կծում էր կնկայ թուշն ու խմում հարիւր տարեայ գինին։

Յետոյ թիկն էլ տալիս գահի բեհեզեայ բարձերին, ծխում էր մարգարտէ չիբուխը, և միտք էր անում աշխարքի բանը ու քա՛հ-քա՛հ ծիծաղում։

❀❀❀

Եւ մինչև այսօր էլ կայ ու կենդանի է Աղա Նազարը, նստել է գահի վրայ, ծխում է մարգարիտէ չիբուխը, և միտք է անում աշխարքի բանը ու քա՛հ-քա՛հ ծիծաղում...



## «ԼՈՅՍ» ԳՐԱՏՆ
## ՍԵՓԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

| | | ՖՐԱՆՔ |
|---|---|---|
| 1.— Լեռներու Խորհուրդը | Կ. ՍԱՍՈՒՆԻ | 30 |
| 2.— Անուշ եւ Թմկաբերդի Առումը | Ե. ԹՈՒՄԱՆԵԱՆ | 5 |
| 3.— Ձմեռն Անցաւ (Մեներգ) | Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ | 5 |
| 4.— Երկու Ծայրայեղներ (Զաւեշտ մէկ արարով) | Հ. Ա. ՏԻՐՈՑԵԱՆ | 5 |
| 5.— Ղազարն եւ իր Էշը | Փ. ՄԻՔԱՑԷԼԵԱՆ | 5 |
| 6.— Սեւ Կաքաւիկ (Մեներգ) | Ռ. ՄԵԼԻՔԵԱՆ | 5 |
| 7.— Ես Բլբուլ եմ « | « « | 5 |
| 8.— Փարոսի Պահապանները (Տուամ մէկ արարուած) | ՕԹԻԷ եւ ԳԼՕՔԸՄԷՆ | 3 |
| 9.— Պաշտօնս Խումհալ է (Կատակերգութ. մէկ արար) | Ք. ԺՊՏՈՒՆԻ | 4 |
| 10.— Աղա Նազար (Հէքեաթ) | Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ | 4 |

Գին.— Սիւրիա եւ Լիբանան 4 Ֆրանք
Արտասահման 25 Սէնթ

Դիմել՝

HRANT H. ABADJIAN
LIBRAIRE - EDITEUR
B. P. 870
BEYROUTH , (LIBAN